ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 42

## ՄԱԼԻՇԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՄԻՋև ԿՆՔՎԱԾ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՌԱՆԳԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՐՈՒՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 619-րդ հոդվածի 2-րդ մասի,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 76-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգնաձորի նոտարական գրասենյակի կողմից տրված 613-20200618-84-4587732 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը`

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Մալիշկայի համայնքապետարանի և Մալիշկա համայնքի բնակիչ` հանգուցյալ Հրաչիկ Սարգսի Ստեփանյանի միջև 02.03.2002թ 25 տարի ժամկետով կնքված հողամասի վարձակալության պայմանագրի <<Հուսոյի կայա>> կոչվող տարածքում ընդամենը` 4000 քառ.մ. մակերեսով(տրված թիվ 0026911` 3300քմ և թիվ 0026912` 700քմ անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման վկայականով) մնացած 6 տարի 8 ամիս ժամանակաշրջանը, մինչև պայմանագրի ավարտը շարունակել և կնքել պայմանագիր հանգուցյալ` Հրաչիկ Ստեփանյանի ժառանգ` Արմեն Հրաչիկի Ստեփանյանի / ծնվ.28.07.1971թ/ հետ :

2.Տարեկան վարձավճարը թողնել անփոփոխ` նույնը տարեկան 6000/վեց հազար/ ՀՀ դրամ:

3.Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով ըստ տարվա օրացուցային եռամսյակների,ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը:Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ ,քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

2020թ. Հունիսի 26
գ.Մալիշկա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 43

## ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> 43-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ սահմանված կարգը `Մալիշկա համայնքի ղեկավարը

ՈՐՈՇՈՒՄ Է

Մալիշկա համայնքի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 8-րդ փողոց 66 հասցեում գտնվող ,0.038 հա մակերեսով պետությանը նվիրաբերված հողամասի/անշարժ գույքի գրանցման վկայական N17062020-10-0020/վրա առկա 49.8 քմ մակերեսով շինության(կադաստրային ծածկագիր 10-032-0140-0007-001) նպատակային նշանակություն արտադրականը` փոխադրել հասարակական նշանակության, շինության` առևտրի սրահ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

2020թ. Հունիսի 26
գ.Մալիշկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 44

## ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ 0.13372 ՀԱ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,ՀՀ կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ Մալիշկա համայնքի ղեկավարը

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համայնքային սեփականություն հանդիսացող 0.13372 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0073--) նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողամասը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տալ հետևյալ հասցեն՝ Մալիշկա համայնք 18-րդ փողոց 81 հողամաս

3.Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

2020 թ. Հունիսի 30

գ.Մալիշկա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 45

## ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.03331 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Հողային օրենսգրքի>> 76-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով Մալիշկա համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 13-ի թիվ 29 որոշումը, Մալիշկա համայնքի մրցույթային հանձնաժողովի 01.07.2020 թվականի թիվ 1 և 2 արձանագրությունները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մալիշկա համայնքի սեփականություն հանդիսացող 0.03331 հա /ծածկագիր՝ 10-032-0214-0226/, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք, հողամասը 25 տարի ժամկետով վարձակալությամբ հատկացնել մրցույթում հաղթող ճանաչված Մալիշկա համայնքի բնակիչ Վահե Նորիկի Մովսիսյանին:

2. Հողամասի կադաստրային արժեքը կազմում է՝ 62,500 /վաթսուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

3. Տարեկան վարձավճարը սահմանել 3500 /երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, որը կազմում է կադաստրային արժեքի 168 %-ը:

4. Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 292 (երկու հարյուր իննսուն երկու ) ՀՀ դրամ:

5. Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:

6. Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:

7. Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

2020թ. Հուլիսի 01

գ.Մալիշկա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 46

## ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մալիշկա համայնքի ավագանու 24 հունիսի 2020 թվականի թիվ 32 որոշումը, Մալիշկա համայնքի ղեկավարը

ՈՐՈՇՈՒՄ Է

ԼՈՏ 1

Մալիշկա համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 1.2312 հա (կադաստրային ծածկագիրը՝10-032-0276-0012 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,գործառնական նշանակությունը՝արոտավայր) հողամասը աճուրդով օտարել:Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 200%-ի չափով՝ 153900(հարյուր հիսուն երեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

ԼՈՏ 2

1) Մալիշկա համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 0.22988 հա (կադաստրային ծածկագիրը՝10-032-0221-0881 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,գործառնական նշանակությունը՝այլ հողատեսք) հողամասը աճուրդով օտարել:Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 21551(քսանմեկ հազար հինգ հարյուր հիսուն մեկ). ՀՀ դրամ:

2) Մալիշկա համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 0.54548 հա (կադաստրային ծածկագիրը՝10-032-0221-0882 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,գործառնական նշանակությունը՝այլ հողատեսք) հողամասը աճուրդով օտարել:Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 51139(հիսուն մեկ հազար հարյուր երեսուն ինը) ՀՀ դրամ:

Լոտի ընդհանուր մակերեսի չափը կազմում է 0.77536 հա, արժեքը՝72690(յոթանասուն երկուհազար վեց հարյուր իննսուն)ՀՀ դրամ:

ԼՈՏ 3

Մալիշկա համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 1.8 հա (կադաստրային ծածկագիրը՝10-032-0221-0883 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,գործառնական նշանակությունը՝այլ հողատեսք) հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 140 %-ի չափով՝

157500(հարյուր հիսուն յոթհազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

ԼՈՏ 4

Մալիշկա համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 0.09467հա (կադաստրային ծածկագիրը՝10-032-0274-0063 նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) հողամաս աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով 499 857(չորս հարյուր իննսունիննը հազար ութ հարյուր հիսուն յոթ ) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

2020 թ. Հուլիսի 03

գ.Մալիշկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 47

## ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով,Մալիշկա համայնքի ղեկավարը

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համայնքային սեփականություն հանդիսացող 1.00000 հա (կադաստրային ծածկագիր 10-032-0276- նպատակային նշանակությունը՝գյուղատնտեսական գործառնական նշանակությունը՝արոտավայր) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝համայնքային սեփականություն:

2.Համայնքային սեփականություն հանդիսացող 2.00048 հա (կադաստրային ծածկագիր 10-032-0277- նպատակային նշանակությունը՝գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝արոտավայր) հողամասը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

3.Համայնքային սեփականություն հանդիսացող 1.00477 հա (կադաստրային ծածկագիր 10-032-0221- նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝այլ հողատեսք) հողամասը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

2020 թ. Հուլիս 06
գ.Մալիշկա